

Անցկացվեց 4–սենյականոցների վիճակահանությունը

Ամանորին եւ Սուրբ Ծննդին ընդառաջ բնակբաշխման հանրապետական հանձնաժողովը քաղձիննախարար Վարդան Վարդանյանի ղեկավարությամբ եւ Շիրակի մարզպետ Աշոտ Գիզիրյանի ու Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի մասնակցությամբ Գյումրիում անցկացրել է բնակարանաշինության այս փուլի առաջին վիճակահանությունը:

Պտտվող թմբուկից սպասված բնակարանների համարները դուրս բերելու հնարավորություն են ունեցել միայն 4 սենյականոց բնակարանների հավակնորդ շահառուները: Գյումրիում 4—սենյականոց 124 բնակարան է կառուցվել:

Վիճակահանվել է 109—ը:

Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանի հավաստմամբ, 2012 թվականի առաջին եռամսյակում կավարտվեն անօթեւանների ներկայացրած բոլոր փաթեթներն ու կիրականացվի նաեւ 3, 2 եւ 1 սենյականոց բնակարանների վիճակահանություն:

Ընդհանուր առմամբ 4 սենյականոց բնակարան ստանալու համար հաշվառված է 191 ընտանիք, նրանցից 2—ը ծրագրի շահառու չի դիտարկվել, քանի որ կորցրել է անհատական բնակելի տուն, 2 ընտանիք էլ բնակարան է ստացել մինչեւ ծրագրի սկիզբը: Եվ քանի որ մասնակցող 109 ընտանիքներից 21—ում առկա է հաշմանդամ անձ, շահառուների ընդհանուր համաձայնությամբ նրանց առաջարկվեցին բնակարաններ առաջին հարկերում:

4 սենյականոց բնակարանի հավակնորդներից կան գործեր, որոնցում առկա են թերություններ, հանձնաժողովը նրանց հնարավորություն է տվել մինչեւ հունվարի վերջը լրացնել թերությունները: Վարդան Վարդանյանը վստահեցնում է, որ մինչեւ 2012 թ. ապրիլ ամսվա սկիզբը կավարտվեն բոլոր փաստաթղթերի ուսումնասիրություններն ու հերթով կանցկացվեն 3, 2 եւ 1 սենյականոց բնակարանների վիճակահանությունները:

Իսկ այսօրվա վիճակահանությանը մասնակցող 21 շահառուների ընտանիքներին, որոնցում առկա են 1—ին եւ 2—րդ կարգի հաշմանդամներ, հնարավորություն տրվեց արտահերթ բնակարան ընտրել առաջին հարկերից:

Խոսելով այժմ Մուշ–2 թաղամասում ընթացող շինաշխատանքներից, քաղաքաշինության նախարարը տեղեկացրեց, որ շինհրապարակներում աշխատանքները դադարեցված չեն, պարզապես ընթանում են ներքին հարդարման աշխատանքները, որոնց որակը, ըստ պատասխանատուի, էապես տարբերվում է նախորդ ծրագրերից:

Վարդան Վարդանյանը նշում է, որ 2012 թվականի բյուջեով քաղաքաշինության նախարարությանը հատկացված է 3,5 մլրդ դրամ գումար՝ այս խնդրին վերջնական լուծում տալու համար: